

**ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՀԱՐԱՎ-ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳԱՎԱՌՆԵՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ
ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԴՐԱ
ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ԳՈՐԳԱԳՈՐԾԱԿԱՆ
ՍՇԱԿՈՒՅԹԻ ՆԿԱՐԱԳՐՈՒՄ
(XIX դ. երկ. կես - XX դ. սկիզբ)**

Ա. Ա. ՊՈՐՈՍՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու

ԳՊՀ պատմության ամբիոնի դասախոս

Վասպուրականը Մեծ Հայքի խոշորագույն նահանգն էր ու զբաղեցնում էր Վանա լճի արևելյան ու հարավարևելյան ափերից մինչ Գողթան գավառ ու Արաքս-պար (Ղարաղաղ) ընկած տարածքները: Արևելքում ու հարավ-արևելքում էլ այն ձգվում էր մինչ Ուրմիա լճի ափերն ու Արևելյան Տիգրիսի վերին հոսանքների ավազանը: Այս նահանգը նաև հայոց հնամենի թագավորություններից մեկի՝ Վանի թագավորության կենտրոնական հատվածն էր, իսկ Վան քաղաքն էլ՝ նախկին Տուշպան՝ նրա մայրաքաղաքը: Այս տարածաշրջանում էր գտնվում հայոց նախարարական հզոր տներից մեկի Արծրունիների նախարարական տան ժառանգական սեփականություն Աղբակ ընդարձակ գավառն իր Հադամակերտ ամրոցով ու ամբողջ Վասպուրաականն էլ կազմում էր Արծրունիների հայոց թագավորության հիմնական մասը IX- XI դարերում: Տարածաշրջանը երկրագործության ու անասնապահության զարգացման համար ուներ միանգամայն նպաստավոր պայմաններ, որի արդյունքում էլ հնարավորություններ կային նաև բազմատեսակ արհեստների և օժանդակ զբաղմունքների զարգացման համար: Վանը հայտնի էր որպես արհեստների և առևտրի կենտրոն՝ մասնավորապես այստեղ բարձր մակարդակի էին ոսկերչությունը, զինագործությունը, ոստայնակությունը՝ այդ թվում նաև զորագործությունը և կարպետագործությունը: Խնդրո առարկայի առումով վկայում են արաբական սկզբնաղբյուրները, ըստ որոնց Վանը արաբական խալիֆայի դարաշրջանում հայտնի էր որպես խոշոր գորգեր գործելու կենտրոն, համեմայնդեպս, հենվելով IX դարի արաբ ճանապարհորդ Աբու Ավնիի նշումներին, այդպիսի տեղեկություններ է հաղորդում արաբ աշխարհագետ ու ուղեգիր Յակուտ-ալ Համավին:¹ Գավառներում էլ, մասնավորապես Խոյուն, Բերկրիում, Ախլաթում,

¹ Վ. Թեմուրճյան, Գորգագործությունը Հայաստանում, Եր., 1955, էջ 32, Յակուտ-ալ Համավի, Աշխարհագրական բառգիրք.- Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, կազմեց Դ. Թ. Նալբանդյան, Եր., 1965, էջ 119:

Արժեշուն ինչպես նաև Սալմաստուն, ըստ տաջիկ անանուն ուղեգրի հաղորդումների, հայտնի էին տարբեր եղանակներով գործված կարպետներն ու մանաստիպ գործվածքներն ու մասնավորապես, հիշատակում է Սալմաստին բնորոշ «գիլի» կարպետների մասին:² Նշված գավառների մի մասը XIX երկրորդ կեսից մտնում էին Վանի վիլայեթի երկու սանջակներից մեկի՝ Ղեքարիի սանջակի կազմը:³ Այս ժամականերում էլ Վասպուրականի հայոց մեջ՝ մասնավորապես արևելյան ու հարավարևելյան գավառներում լայն տարածում ունեցող գորգագործությունը: Այս առումով հատկանշական են Մ. Միրախոբյանի կողմից 1880-ական թվականներին արված դիտարկումները: Նա նկարագրելով Ղարաթոփի հայերի կենցաղն ու զբաղմունքները, նշում է, որ ծանախ ամիսներին հայ կանանց հիմնական զբաղմունքը գորգագործությունն էր, նրանք «ծանախ ամիսներին գործում էին ընտիր գորգեր»:⁴ Աղբակի հայուհիների մասին էլ հիշատակում է, որ նրանք «կգործին դիմացկուն գորգեր և այլ գործվածքներ»:⁵ Աղբակի հայերի գորգագործությամբ զբաղվելու մասին որպես ականատես հաղորդում է նաև Բաֆֆին՝ «նրանք գիտեն յուրիյանց անասունների բրդից գործել հագուստի բոլոր պիտույքները, որոնցից պատրաստում են վերարկուներ (ապա), շալվարներ, քազախաներ, զանազան տեսակ օթոցներ, կապերտներ և այլն, որք վաճառքի նյութ ևս դառնում են: Այդ արհեստը ըստ մեծի մասին կատարվում է կանանց ձեռքով, որք և մանում են բուրդից թելեր և գործում են նորան»:⁶ Վասպուրականի մի շարք այլ գավառներում՝ Արծկեում, Բերկիրում ու արդեն հիշատակված Ղարաթոփում կարպետագործության ու գորգագործության զարգացած ու տարածված լինելու մասին ազգագրական տեղեկություններ են հրապարակված Վարդան Թեմուրճյանի հայտնի աշխատությունում:⁷

Պատմական Վասպուրականի արևելյան ու հարավարևելյան գավառները XIX դարի երկրորդ կեսերին ու XX դ. սկզբներին էլ շարունակում էին մնալ գորգագործության կենտրոններ:

² Զ. Փափազյան, Անանուն տաջիկ աշխարհագիրը Ղարաթոփի, Աղբեջանի և արևելյան Վրաստանի աշխարհագրության և տնտեսական հարաբերությունների մասին (10-րդ դ.)- ՂԱՍՅ ՊԱՍՏԵՐՆԻՔ, Եր., 1953, էջ 78-79:

³ Ա. Պո, Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները, Երևան, 1912, էջ 9: Տես նաև՝ Զ. Պողոսյան, նշվ. աշխ., էջ 11:

⁴ Մ. Միրախոբյան, Նկարագրական ուղևորությունի հայաբնակ գավառն Արևելյան Տաճկաստանի, մասն Բ. Կ. Պոլիս, 1885, էջ 18:

⁵ Մ. Միրախոբյան, նշվ. աշխ., էջ 56:

⁶ Բաֆֆի, Ուղեգրություններ, ճանապարհորդություն Պարսկաստանի.- Երկերի ժողովածու, հ.9, էջ 108:

⁷ Վ. Թեմուրճյան, նշվ. աշխ., էջ 117:

Ամեն պարագայում հայոց գորգագործական մշակույթի ուսումնասիրման ու դրա ամբողջական պատկերի բացահայտման առումով կարևոր է պարզել այս տարածաշրջանին բնորոշ գորգերի տիպերն ու դրանց գեղարվեստական ու տեխնոլոգիական հատկանիշները: Անշուշտ, այս հիմնահարցերին պատասխանելու համար անհրաժեշտ են ծավալուն ուսումնասիրություններ, մինչդեռ ինչպես պատմական Հայաստանի, այնպես էլ այս տարածաշրջանի գորգագործական մշակույթի մասին չկան համապարփակ ուսումնասիրություններ: Կարծում ենք, որ պատմական Հայաստանի այս կամ այն տարածաշրջանի մշակութային որևէ համալիրի ուսումնասիրման ու մանավանդ դրա ծագումնաբանական և տիպաբանման հարցերին անդրադառնալուց լուրջ խնդիրներ են հարուցում դրանցում ընթացած ժողովրդագրական գործընթացները: Այս պարագայում, ժողովրդագրական ու մշակութաբանական ուսումնասիրությունները առանձնահատուկ են, լրացնում են միմյանց և հնարավորություն ընձեռում հանգել որոշակի եզրակացությունների: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ խնդրո առարկա տարածաշրջանում պատմականորեն ձևավորվել էր ժողովրդագրական բարդ նկարագիր ու մանավանդ՝ որ այդ նկարագրի մաս կազմողների թվում կային գորգագործությամբ ավանդաբար զբաղված էթնիկական տարրեր, անհրաժեշտ ենք համարում, նախ անդրադառնալ այդ հարցին:

Ժողովրդագրական զարգացումների շարժընթացի մասին. Վասպուրականի մեզ հետաքրքրող գավառներում ժողովրդագրական ակտիվ գործընթացների մեզ հետաքրքրող շրջանը սկսվում է V-VI դարերից, երբ Հայաստանում Արշակունյաց թագավորության անկումից հետո, օգտվելով կենտրոնական իշխանության թուլացումից պատմական Հայաստանի հարավարևելյան նահանգներ են սկսում ներթափանցել ու հիմնավորվել իրանալեզու էթնիկական տարրեր: Այդ հանգամանքն էլ նպաստավոր պայմաններ է ստեղծում արաբական գերիշխանության ընթացում այդտեղ քրդական մի շարք ցեղերի հաստատման ու կիսանկախ էմիրությունների կազմավորման համար: Վասպուրականի Արծրունյաց թագավորության անկումից հետո էլ, երբ նրա բնակչության մի զգալի մասը Սեմեքերիմ վերջին թագավորի հետ միասին տեղափոխվեցին Փոքր Հայք, հայոց թվաքանակն այդտեղ ավելի նվազեց, իսկ արաբական տիրապետության շրջանում Վասպուրականի հարավային գավառներում հաստատված քրդական ցեղերն էլ աստիճանաբար տարածվեցին նաև հյուսիսային գավառներում:⁸ Աշխարհաքաղաքական հետագա իրադարձությունների արդյունքում դրան հաջորդում են այլ ներթափանցումներ ու տարա-

⁸ Թ. Հակոբյան, Հայաստանի պատմական աշխարհագրություն, Եր., 1984, էջ 277:

ծաշրջանի բնակչության կազմում սկսում են նկատելի տեղ գրավել մահմեդական տարրերը: Դա հատկապես տեսանելի էր հարթավայրային շրջաններում, որտեղի հայ բնակչությունը մեծ մասամբ տեղափոխվում էին լեռնային համեմատաբար ապահով ու անվտանգ վայրերը: XVI-XVII դարերում այդ իրավիճակն ավելի հաստատուն է դառնում և դա մեծ չափով պայմանավորված էր Օսմանյան Թուրքիայի վարած քաղաքականությամբ, ըստ որի, կայսրության արևելյան սահմանների պաշտպանության ապահովման համար սահմանամերձ շրջաններում բնակեցվում էին քրդական քոչվորական ցեղեր, որոնց մի մասն էլ հետագայում դառնում է նստակյաց:⁹ Այդ կերպ Բայազետի ու Բերկրիի գավառներում (պատմական Կոզովիտ ու Արտազ) XVI դարում հաստատվեցին քրդերը:¹⁰ Այս բոլոր իրադարձությունները առավելապես վերաբերում էին հենց Վասպուրականի արևելյան ու հարավ արևելյան գավառներին, որոնցում արդեն XIII-XIV դարերից սկսած իշխում էին քրդական տարրերը:¹¹ Այդ հանգամանքն ու նաև այն, որ Վասպուրականը 1550-ական թվականներից թուրքական տիրապետության տակ էր, մեծապես նպաստել է նաև հայեցի տեղանունների մեծ մասի վերացմանը՝ երբեմնի հայկական անվանումները փոխարինվեցին թուրքական անվանումներով՝ ԱղբակըԱլպաք, այնուհետև Յեքիարի, Անձևացյաց գավառը՝ Նորդուզ, Բերկրին՝ Պարկրի, Բուժու-նիքը՝ Խոշապ, Հադամակերտ քաղաքը՝ Յեքիարի-Պաշկալե և այլն:¹² Ասվածը չի նշանակում թե այդ տարածաշրջաններում հայ հանրույթը ամբողջությամբ կորցնում է իր դերն ու նշանակությունը, համեմայնդեպս 1780-ական թվականներին վերաբերող մի փաստաթղթից պարզվում է, որ Աղբակում եկեղեցիներից մեկի առաջնորդ նշանակելու խնդրանքով տեղի քուրդ բեկերից մեկը դիմել էր Ղուկաս Կարնեցուն:¹³ Այդ նույն թվականներին վերաբերող կաթողիկոսական կոնդակներից նկատելի է, որ հայահոծ էին Ուրմիա լճի ավազանի գավառները՝ Մարաղան, Սուլդուզը, Ուրմիան, Սալմաստը, Խոյը և այլն:¹⁴

Այս ամենով հանդերձ, հիշատակված տարածաշրջանների ժողովրդագրական նկարագրի՝ մասնավորապես հայոց ու այլազգիների թվաքանակի, դրանց բնակության վայրերի ու հիմնական զբաղմունքների մասին այս կամ այն չափի հավաստի տեղեկությունները վերաբերում են XIX դարի երկրորդ կեսին ու XX դարի սկզբներին: Ըստ այդմ՝ Վասպուրական վիլայեթը 1880-ա-

⁹ Նույնը, էջ 387:

¹⁰ Ա.Ալպոյաճյան, Պատմական Հայաստանի սահմանները, Կահիրե, 1950, էջ 438:

¹¹ Թ. Հակոբյան, Նշվ. աշխ., էջ 304-305:

¹² Հ.Մ. Պողոսյան, Վասպուրականի պատմությունից /1850-1900/, Եր., 1988, էջ 6:

¹³ Դիվան հայոց պատմության, Նոր շարք, գիրք առաջին, Ղուկաս Կարնեցի, հատոր Ա, 1780-1785, աշխատասիրությամբ Վարդան Գրիբորյանի, Եր., 1984, էջ 68:

¹⁴ Նշվ. աշխ., էջ 178, 419 և այլն:

կանների կեսերին Բուլանխների, Մանագկերտի ու Խնուսի հետ միասին ուներ 314101 հայ բնակիչ: Առանց այդ գավառների՝ միայն Վասպուրական նահանգում կային 249361 հայ բնակիչ, 86368 ասորիներ, 51828 քրդեր, 13964 թուրքեր, 7760 եզդիներ, 809 հրեաներ:¹⁵ Այսինքն՝ Վասպուրականը Արևմտյան Հայաստանի հայաշատ նահանգներից էր, որտեղ հայոց ընդհանուր թվաքանակը գերազանցում էր մյուս եթնիկական տարրերի թվաքանակին՝ միասին վերցրած:

Հայաշատ էին նաև հարակից Սալմաստի և Ուրմիայի գավառները: Ըստ Րաֆֆու դիտարկումների՝ 1880-ական թվականների սկզբին Սալմաստում կար մինչև հազար տուն հայ, մինչդեռ 1827 թվականից առաջ հայոց գերդաստանների թիվն այդտեղ հասնում էր մի քանի հազարի՝ «նրանք գաղթեցին Ռուսաստան, թողնելով ամբողջ գյուղորայք դատարկ, որոնց մեջ հետո բնակվեցին թուրքերը»:¹⁶ Սա տարածաշրջանի ժողովրդական նկարագրի փոփոխման տիպիկ դրվագ է, ընդ որում՝ թուրքեր ասելով, այստեղ պետք է հասկանանք Ատրպատականի թուրքմենական ծագումով մահմեդական տարրերին՝ ավշարներ, շահսևաններ և այլն: Տարածաշրջանի հայոց թվաքանակը, ըստ Րաֆֆու դիտարկումների, փոխվում է նաև 1877-78 թթ. ռուս-թուրքական պատերազմի ընթացքում տեղի ունեցած շեյխ Ջալալեդդինի արշավանքների ընթացքում ու դրանից հետո, երբ Վասպուրականում շարունակվում էին ավարառության ենթարկվել հայկական հարյուրավոր գյուղեր:¹⁷

Ընդհանրապես՝ 1877-78 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո Ադրբայի, ինչպես նաև Ալաշկերտի ու Մոկաց գավառների 150 գյուղ դատարկվեցին հայերից: Ադրբայրների հաղորդումներից պարզվում է, որ 1858-1878 թվականների ընթացքում Վանա լճի հարավային մասում ընկած վեց գավառների 2440 հայ ընտանիքներից մնացին 585-ը:¹⁸ Այդ նույն թվականներին Վասպուրականի Ադրբայ գավառի վարչական կենտրոն Բաշկալե քաղաքում արդեն մեծամասնություն էին կազմում հրեաները՝ 150 տուն, դրանք կազմում էին առևտրա-արհեստավորական խավի հիմնական մասը: Քաղաքում ապրում էին 100 տուն հայեր ու 10 տուն մահմեդականներ: 1880 թվականին այդ գավառում, ըստ Արսեն Թոխմախյանի հավաքած նյութերի, ապրում էր 9959 հայ, 8608 քուրդ, 1447 ասորի, 489 հրեա: Սակայն այս տարածաշրջաններում տեղ ու տիրական էին քուրդ ցեղապետերը, որոնք միայն ձևականորեն էին ենթակա սուլթանին՝ իրականում նրանք վարում էին միանգամայն ինքնուրույն ներ-

¹⁵ Հ. Մ. Պողոսյան, նշվ. աշխ., էջ 15:

¹⁶ Րաֆֆի, Ուղեգրություններ, ճանապարհորդություն Պարսկաստանի, Երկերի ժողովածու, հ.9, էջ 70:

¹⁷ Նույնը, էջ 19:

¹⁸ Հ. Պողոսյան, նշվ.աշխ., էջ 20:

քին: Քրդերը միանգամայն թշնամական վերաբերմունք ունեին թուրքերի նկատմամբ ու դրա մասին կարող է վկայի այն հանգամանքը, որ նրանք ու թուրքերը ոչ մի գյուղում համատեղ չէին բնակվում: Քրդական ցեղերի միջավայրում թուրքական ցեղերի համար ընդունված էր «ռոմի» անվանումը, ըստ որի, տարածաշրջանի համար թուրքը համարվում էր օտարական ու խորթ տարր:¹⁹ Ըստ էության՝ թուրքական իշխանությունների քաղաքականությունն էլ ուղղված էր քրդերի ու հայերի միջև հակադրություններ ստեղծելուն ու դրանք զարգացնելուն և դրա դրսևորումներից մեկն էլ հենց թուրք ցեղապետերին լայն լիազորություններ տալն էր: Քաղաքական ու տնտեսական բնույթի այդ բոլոր իրադարձությունների հետևանքով Յեքարիում՝ այսինքն Վասպուրականի հարավարևելյան գավառներում, 1891 թվականին վերաբերող մի վիճակագրության համաձայն, բնակվում էին 15 հազար հայ, 180 հազար մահմեդական և այլ ցեղերի պատկանող 105 հազար մարդ:²⁰ Նշենք, որ 105 հազար ընդհանուր բնաչությանը այլ ցեղերի թվում խոշորագույնը «Ջուլո» ցեղին պատկանող ասորիներն էին, որոնք կիսանկախ իշխանություն ունեին Աղբակին հարակից Ջուլամերիկ գավառում, որն էլ երբեմնի Փոքր Աղբակի մի մասն էր հանդիսանում:²¹ Ինչպես տեսնում ենք, երբեմնի հայաիհոծ տարածաշրջանում հայերը XIX դարի վերջում կազմում էին արդեն չնչին փոքրամասնություն:

XIX դարի վերջում՝ մասնավորապես 1894-96 թթ. հայկական ջարդերից հետո Վասպուրականի հարավարևելյան այս գավառներում տեղի էին ունենում ժողովրդագրական այլ փոփոխություններ ևս՝ այս շրջանում է, որ Հայոց ծորում հաստատվում ու թվական գերակշռություն են ստանում քրդերը, հուշաբուն եղած շուրջ հազար տուն հայերից մնում է անմշան մասը:²² Տարածաշրջանում քրդական տարրի գերիշխանության հետ միասին, նշենք, որ դրանք տարատեսակ ու մեծամասամբ թշնամական հարաբերությունների մեջ գտնվող ցեղեր էին: Այդ հանգամանքը դրսևորվում էր փոխադարձ ասպատակությունների ու ավարառությունների տեսքով, որոնց ընթացքում դարձյալ տուժում էին տարածաշրջանի հայերը: Այդ ամենի հետևանքով Վասպուրականի հարավարևելյան գավառներից՝ հատկապես Հայոց ծորից, նրանք

¹⁹ Արսեն Թոխմախյան, Հայրենիքի պահանջները և հայ գյուղացին/հրապարակախոսություն կատարված 1881 թ. մայիսի 24-ին և կրկնված յունիսի 12-ին Արծրունու թատրոնում/, Թիֆլիս, 1881, էջ 76: Տես նաև Մ.Ա., Թուրքիայի հայերը և նրանց դրացիները, Մարսել, 1890, էջ 32, Հ.Մ. Պողոսյան, նշվ. աշխ., էջ 83:

²⁰ Ա.-Դո, նշվ., էջ 240-241: Տես նաև Հ.Պողոսյան, նշվ. աշխ., էջ 49

²¹ Ա.-Դո, էջ 10, Հ. Պողոսյան, նշվ. աշխ., էջ 84, տես նաև՝ Բաֆֆի, Ուղեգրություններ, ճանապարհորդություն Պարսկաստանի.- երկերի ժողովածու, հ. 9, էջ 117, Թ. Հակոբյան, նշվ.աշխ., էջ 230:

²² Ա.-Դո, նշվ.աշխ. էջ 45,49: Տես նաև Հ.Պողոսյան, նշվ. աշխ., էջ 49

սկսում են զանգվածաբար տեղափոխվել Խոյի ու Սալմաստի գավառներն ու հաստատվել Աբաղայի դաշտում: Արամ Մանուկյանն իր դիտարկումներում պատմում է, որ նրանք վերջին 40-50 տարվա ընթացքում (1860-1910 թվականներ՝ Ա.Պ.) նեղվելով քրդերի հալածանքներից, գաղթել են Նորդուզից, որոշներն էլ՝ Սարայից: Բնակության այդ նոր վայրերում հայերն իրենց միջոցներով մշակում էին քուրդ աղաներին պատկանող հողատարածքներն ու ստանում էին բերքի կեսը: Բացի այդ, նրանք վարում էին աղայի տան գործերը, կատարում պետք եղած տնտեսական ու կենցաղային աշխատանքները: Այս վիճակը անվտանգ ու նպաստավոր էր հայերի համար:²³ Նման իրավիճակի մասին մշել է նաև Ա-Դօն, ըստ որի, հողատեր քրդերից ճորտային կախման մեջ գտնված գյուղացու կինն ու աղջիկը իրենց հերթին «պետք է կատարեին աղայի տնային աշխատանքները (կար, լվացք, գործվածքներ գործել և այլն)»:²⁴

Տարածաշրջանի ժողովրդագրական գործընթացների մի կարևոր պատճառ էլ XIX դարի երկրորդ կեսից՝ հատկապես 1890-ական թվականներից սկսված արդյունաբերական ու մանավանդ նավթարդյունաբերության բուռն վերելքն էր: Բանվորական ուժի անընդհատ աճող պահանջի պայմաններում տեղի էր ունենում հայոց զանգվածային արտահոսք դեպի արդյունաբերական կենտրոններ՝ հատկապես Բաքու: Այս առումով ուշագրավ են 1909 թվականին Թիֆլիսում կայացած տնայնագործական համագումարում եղած ելույթներից մի քանիսը, որոնցում ներկայացվել էին նաև Վասպուրականի մեզ հետաքրքրող գավառների գորգագործական մշակույթի նկարագրին, դրա զարգացումներին վերաբերող դիտարկումներ: Մասնավորապես շեշտվում է, որ «դեռևս 1860-ական թվականներին Սալմաստը ներկայացնում էր մի գործարանական Բալախանի իր գորգագործությամբ, այսինքն զարգացած էր ինչպես նավթարդյունաբերությունը Բաքվի համանուն թաղամասում (ԱՊ), նույնը և Թավրիզը: Սակայն նրանցից այսօր բեկորներ են մնում: Սալմաստում գորգագործությունը ոչնչացել է, իսկ Թավրիզում մնում է միայն մի հատիկ գործարան»: Ելույթ ունեցողն այդ իրավիճակի հետևանք էր համարում այդտեղից կատարված «հսկայական արտագաղթը, որ վերջին տարիներս սկսված է Սալմաստում», իսկ արտագաղթի պատճառն էլ համարում էր տնայնագործության, մասնավորապես գորգագործության անկումը:²⁵ Պարսկաստանում ապրած ու Սալմաստի իրավիճակին քաջատեղյակ Յ. Արիստակեսյանի կարծիքով էլ, որը նաև Բաքվում 1908 թվականին կազմակերպված ջուլիականոցի վարպետն էր,

²³ Արամ Մանուկյան, Յուշեր, Եր., 1990, էջ 29-30:

²⁴ Ա-Դօ, մշվ., էջ 277: Տես նաև Դ. Պողոսյան, մշվ. աշխ., էջ 49:

²⁵ Տնայնագործական համագումար, Թիֆլիս, 1909, էջ 256:

հենց արտագաղթի վարակիչ դարձած շարժումն էր համարում այդ տարածաշրջանում տնայնագործական զբաղմունքների ու գյուղատնտեսության անկման պատճառը:²⁶ Անշուշտ, անկախ գորգագործական մշակույթի անկման պատճառներից ու ծավալից, մեր համար կարևոր է այն հանգամանքը, որ այդ երկու տեղեկություններում էլ շեշտվում է մեզ հետաքրքրող տարածաշրջաններում գորգագործական մշակույթի զարգացած լինելն ու նաև այն՝ որ դրանում առանցքային էր հայոց նշանակությունը՝ այլապես հայոց արտահոսքը չէր կարող վճռորոշ հետևանք ունենալ դրա հետագա զարգացումների վրա: Ավելորդ չէ այդ առումով, նշել, որ նույնիսկ 1880-ական թվականներին, այսինքն 1830-31 թվականների մեծ գաղթից ու դրան հաջորդած հետագա տեղաշարժերից հետո էլ Սալմաստի գավառում ապրում էր 11700 հայ:²⁷ Այսպիսով՝ Վասպուրականի հարավարևելյան ու արևելյան գավառներին վերաբերող ժողովրդագրական նկարագրին վերաբերող այս հակիրճ տեղեկատվությունից արդեն իսկ ակնհայտ է, որ այդտեղ տնտեսական մշակույթի բոլոր ոլորտներով զբաղվող հիմնական հանրույթը հայերն էին, որոնք նաև կազմում էին բնակչության նշանակալից մասը:

Վասպուրականի հարավային ու հարավարևելյան գավառների գորգագործական մշակույթի ուսումնասիրման արդի նկարագիրը: Չնայած տարածաշրջանի գորգագործական մշակույթին վերաբերող վերը բերված տեղեկությունների առկայությանը, այնուամենայնիվ, դաշտային ազգագրական նյութերի ու պատմազգագրական ուսումնասիրությունների ծայրահեղ պակասությունը հնարավորություններ չեն ընձեռում Վասպուրականի գորգագործական կենտրոններին բնորոշ գորգերի գեղազարդման ու տեխնոլոգիական հատկանիշների մասին պատկերացում կազմելու հարցում: Մինչդեռ Վասպուրականի գորգագործական կենտրոններում հնամենի ու տեղական ավանդույթներ լինելու մասին է վկայում 1910-ական թվականներին վերաբերող Արմենակ Սազգյանի տեղեկությունն առ այն, որ Կոստանդնուպոլիսի սուլթանական թանգարանների համար գորգեր ձեռք բերելու նպատակով մասնագետներն առաջին հերթին ուղղվում էին Բարձր Հայք և Վասպուրական՝ հատկապես Վան ու Կարին, որտեղ մզկիթներում կուտակված էին նաև տեղի գորգագործական կենտրոններում գործված գորգերի նմուշները:²⁸ Սա թեև չի մատնանշում գորգագործության որևէ կոնկրետ կենտրոն կամ գորգի տիպ, սակայն

²⁶ Նշված աշխ., էջ 258:

²⁷ Մ.Ա., Թուրքիայի հայերը և նրանց դրացիները, Մարսել, 1890, էջ 38:

²⁸ Այս մասին տես՝ Ս. Դավթյան, Դրվագներ հայկական միջնադարյան կիրառական արվեստի պատմության, Եր., 1981, էջ 117-118:

ինքնին բացահայտում է տարածաշրջանի գորգագործական մշակույթի կենտրոնների կարևորությունն ու նաև դրանց ճանաչված լինելու հանգամանքը:

Վերը նշված ու ստորև բերվելիք աղբյուրներում առանձին գորգերի ծագման, գեղագարդման և տեխնոլոգիական հատկանիշների մասին տեղեկությունների բացակայությունը ծայրահեղորեն բարդացնում է տարածաշրջանի գորգագործական կենտրոններին բնորոշ գորգերի տիպերի բացահայտման գործը: Այդօրինակ տվյալներն են, որ այս կամ այն գորգագործական կենտրոնի պատմամշակութային առանձնահատկությունների բացահայտման հարցում ունենում են առանցքային նշանակություն: Որոշ չափով պակասը լրացնում են Հայաստանի թանգարաններում ու արտերկրի մասնավոր հավաքածուներում Վասպուրականին վերաբերող գորգերի ու կարպետների մեր ծեռքի տակ եղած հրատարակված նմուշները: Դրանց գեղագարդման հիմնական հորինվածքների դիտարկումների հիմամբ էլ կարելի է այս կամ այն չափով եզրակացնել, որ այդ տարածաշրջանի ու նաև մերձակա քրդական գորգագործական կենտրոններին հիմնականում բնորոշ էին բուսածաղկային ու երկրաչափական հորինվածքներով գեղագարդված գորգերը: Բացի դրանցից, անկասկած է, որ այդ նույն կենտրոններում ընդունված էին նաև գորգերի ու կարպետների այն տիպերը (օրինակ նշանախշով ու «Գլածոր» հորինվածքով տարբերակվողները), որոնք համընդհանուր տարածում ունեին Առաջավոր Ասիայի ու Փոքր Ասիայի, բնականաբար, նաև պատմական Հայաստանի բոլոր գորգագործական կենտրոններում:

Վասպուրականի ու հարակից տարածաշրջանների քրդական ցեղերին վերագրված գորգերի համեմատական ուսումնասիրությունը թույլ է տալիս պարզել նաև դրանց ու հայոց վերագրված գորգերի ու կարպետների գեղագարդման ու տեխնոլոգիական ավանդույթների նմանությունն ու հստակորեն նշել, որ խնդրո առարկա տարածաշրջանի գորգագործական կենտրոններում ընդհանուր առմամբ տարածված էին գորգերի ու ընդհանրապես գորգատիպ ու կարպետատիպ առարկաների միևնույն տեսակներն ու տիպերը: Ըստ էության, դրանում արտասովոր որևէ բան էլ չկա ու այդ երևույթն էլ կարելի է բացատրել մի շարք հանգամանքներով: Նախ այն, որ գյուղական բնակավայրերի հայոց ու քրդական ցեղերի կենցաղային մանրամասերը աչքի էին ընկնում բազում նմանություններով ու մանավանդ՝ անասնապահությունից ստացված մթերքների մշակման միևնույն ավանդույթների առկայությամբ: Այնուհետև՝ հարկ է կարևորել այն հանգամանքը, որ խնդրո առարկա տարածաշրջանն առանձնապես աչքի չէր ընկնում էթնիկական հանրույթների բազմազանությամբ՝ այդտեղ հիմնականում բնակվում էին հայերն ու քրդական տարատեսակ ցեղերը, իսկ մյուսները՝ թուրքերը, ասորիները, գնչուներն ու հրեաները և

այլն փոքրամասնությունն էին կազմում, և որ առավել կարևոր է, ինչպես խնդրո առարկա տարածաշրջանում, այնպես էլ պատմական Հայաստանի այլ տարածքներում մեծ թիվ են կազմել համատեղ՝ հայերով ու քրդերով բնակեցված գյուղերը:

Այս պայմաններում մենք տարօրինակ ենք համարում ուսումնասիրողների մի ստվար խմբի կողմից խնդրո առարկա տարածաշրջանի գորգագործական կենտրոններին վերաբերող գորգերն ու մյուս նմանատիպ գործվածքը քրդական ցեղերին վերագրելու և հայոց ներկայությունը բացարձակապես անտեսելու փաստը: Տարածաշրջանի գորգագործական մշակույթի ծագումնաբանության հարցում քրդերի դերի ծայրահեղ չափազանցման տեսության ջերմեռանդ հետևորդ Մայքլ Վենդորֆը նույնիսկ այն համոզմունքին է, որ մ.թ.ա. VI-V հազարամյակներին վերաբերող գործվածքի ստեղծողները քրդերի նախնիներն են, այնքանով, որքանով որ Չաթալ Հոյուկը, որտեղից որ հայտնաբերվել են այդ նմուշները, գտնվում է Քրդստանի սահմաններում: Քրդական գործվածքի պատմությունը, ըստ այս ուսումնասիրողի, ավելի քան ութ հազար տարի է:²⁹ Ըստ իւթյան, նմանատիպ տեսակետ ունեցողների համար հիմնական փաստարկն այն է, որ այդ տարածքները՝ մասնավորապես Վասպուրականի հարավարևելյան գավառները ներկայումս քրդաբնակ են, քրդերի մոտ էլ պահվում են ուսումնասիրման ենթարկված գորգերն ու մմանօրինակ մյուս գործվածքները և բացի այդ էլ՝ քրդական ցեղերը ներկայումս էլ զբաղվում են գորգագործությամբ:

Գորգագետ Մուրեյ Էյլանը անդրադառնալով այդօրինակ ուսումնասիրողներից մեկի՝ Վիլյամ Իգլետոնի քրդական գորգագործությանը նվիրված աշխատությանը, Քրդստանի ու ընդհանրապես Անատոլիայի գորգերի ծագումնաբանական հիմնախնդիրների առումով շեշտել է, որ այդ ու ընդհանրապես այդ տարածաշրջաններին վերաբերող ուսումնասիրությունների ամենացայտուն թերությունը հայերի դերի ու մշանակության անտեսումն է, այն դեպքում՝ երբ «ներկայացված բոլոր այդ գորգերը գործվել էին այն ժամանակ, երբ այդտեղ մինչ 1915 թվականը ապրում էին մեծ էթնիկ խմբեր՝ թուրքեր, քրդեր, հայեր ու քրդերն այդ ժամանակաշրջանում տեսանելի թիվ էին կազմում»:³⁰

Մենք չենք էլ կասկածում, որ առաջավորասիական գորգագործական մշակույթի համակարգում իրենց ներդրումն ունեն մաս քրդական ցեղերը, սա-

²⁹ Michael Wendorf Kurdish Rugs and Related Weavings - an 8000 Year Weaving Tradition? http://www.turkoteh.com/salon_00088/salon.htmlw:

³⁰ An introducti to Kurdish rugs and other weavings.Book Review bu Murray L.Eiland <http://www.rugreview.com/orr/9-2-42.htm>:

կայն խնդրո առարկա տարածաշրջանների դեպքում միթե միայն քրդերի մասին կարող է խոսք լինի ու այդ ինչ հիմնավորումներ կան այդօրինակ եզրահանգումների համար:

Ինչքանով էր գորգագործական մշակույթը բնորոշ քրդական բոլոր ցեղերին ու ինչքանով էին նրանք զբաղվում ոստայնանկության այս կամ այն ոլորտով: Ընդհանրապես, XIX - XX դ. սկզբներին վերաբերող գորգերի ու կիրառական արվեստի այլ առարկաների ծագումնաբանության բացահայտման հարցում ինչ նշանակություն պետք է ունենա քրդերի կամ թուրքերի տներում դրանց գտնվելու հանգամանքը: Չէ որ հանրահայտ է, որ դրանց գերակշիռ մասը բազում ավարառությունների ու հատկապես 1915-1922 թվականներին իրականացված Մեծ եղեռնի տարիներին հայերից կատարված զանգվածային հափշտակումների արդյունքներն են: Եվ այս առումով շատ տիպական տվյալներ են գրի առել այդ տարածաշրջանում 1910-ական թվականներին լայն գործունեություն ծավալած քրիստոնեության բողոքական թևի ամերիկյան քարոզիչները՝ «քրդական անկանոն ուժերը Ուրմիայի և շրջակա գյուղերի քրիստոնյաներից խլել են ամեն ինչ՝ սննդեղեն, գորգեր, հագուստ և ոսկյա զարդեր՝ վերցրել այն բոլոր տեղերից, որտեղ հանդիպել են, իսկ նրանց, ովքեր դիմադրել են թալանին, սպանել են կամ վիրավորել»:³¹ Քրիստոնյաններ բառը այս պարագայում նշանակում է միայն հայ, քանի որ գորգագործական մշակույթը հատուկ չի եղել ասորիներին, իսկ այլ քրիստոնյաններ Վասպուրականում և Ուրմիա լճի ավազանում չեն եղել: Բացի այդ էլ, վերը բերված տեղեկություններից մեկում ասվում է, որ քրդաբնակ մի շարք տարածքներում՝ մասնավորապես Աբաղայում քրդերի համար տնային գործածության առարկաներ, այդ թվում գործվածքեղեն պատրաստելու պարտականությունը դրված էր նրանց ենթակա հայկական տնտեսությունների վրա՝ այսինքն գորգերի ու կարպետների ծագումնաբանության բացահայտման հարցում քրդերի ու թուրքերի մոտ դրանց գտնվելու պարագան գուրկ է որևէ նշանակությունից: Բացի այդ էլ՝ հանրահայտ է նաև այն, որ հարակից էթնիկական տարրերի մոտ որոշակի առանձնահատկությունների հետ միասին առկա են լինում նաև դարավոր հարևանության ու մշակութային փոխհարաբերությունների արդյունք հանդիսացող բազմաթիվ զուգահեռներ:

Կա ևս մեկ իրողություն՝ քրդերի թվում են նաև դարերի ընթացքում տասնյակ հազարավոր քրդացած ու կրոնափոխ եղած հայեր՝ մի հանգամանք, որը հավասարապես վերաբերում է նաև «թուրքական» համարվող մշա-

³¹ American Presbyterian Missionaries at Urmia, During the Great War, **Michael Zirinsky**, Ph.D, էջ 13 <http://www.jaas.org/edocs/v12n1/zirinsky.pdf>.

կութային արժեքներին: Ահա այսօրինակ ժողովրդագրական ու աշխարհաքաղաքական գործընթացների նկարագիրը թույլ է տալիս մեզ Վասպուրականի ու համանման նկարագիր ունեցող հայոց մյուս գորգագործական կենտրոններին բնորոշ գորգերի տիպերի բացահայտման հարցում, որպես սկզբնաղբյուր դիտարկել նաև քրդական ու թուրքական ցեղերին վերագրված գորգերն ու կարպետները:

Հաշվի առնելով վերոհիշյալ բոլոր գործոնները, խնդրո առարկա տարածաշրջանների հայոց ու քրդական գորգերի տարբերակման հարցում որպես առավել հիմնավոր փաստարկներ մնում են տեխնոլոգիական ու գունաերանգային առանձնահատկությունները: Այս առումով հայտնի է, որ որոշակի տարածաշրջանների, օրինակ Արևմտյան Հայաստանի կենտրոնական տարածաշրջանների, Բագրևանդի, Բերկրիի ու Կոգովիտի՝ այսինքն Վասպուրականի արևելյան ու հյուսիսարևելյան գավառների քրդական գորգերն ու կարպետները բնորոշվում են գունային երանգներում



Նկ.1 Գորգագործուհու տապանաքար,
Ռահվար գյուղի գերեզմանոցում:

գազարագույնի, դեղնավունի ու նարնջագույնի գերակշռությամբ:³² Աղծնիքում, որտեղ հատկապես հիմնավոր էին իրենց զգում քրդական ցեղերը, XVII դ. թուրք ուղեգիր էվլիա Չելեբին նշել է, որ «այդ երկրին հատուկ է դեղնագույն ներկը»:³³ Քրդերի գործած գորգերի առանձնահատկություններից է նաև երկրաչափական խոշոր, կեռիկազարդ հորինվածքների առկայությունը, ինչպես նաև՝ գործվածքի որակական ցածր հատկանիշները: Այդ ամենի ու նաև գունային երանգների համադրմամբ էլ այս կամ այն չափով հնարավոր է տարանջատել հայոց ու քրդական գորգերն ու կարպետները:³⁴ Ընդ որում՝ դրան նպաստում է նաև այն հանգամանքը, որ սկզբնաղբյուրներում կան նաև Վասպուրականի հայոց բնորոշ գույների մասին տեղեկություններ՝ ըստ այդմ դրանք ունեցել են «բաց կապույտ,

³² Stui՝ Kurdish Rugs and Related Weavings - an 8000 Year Weaving Tradition? by Michael Wendorf, http://www.turkotek.com/salon_00088/salon.htm

³³ Էվլիա Չելեբի, Ուղեգրություններ .- Թուրքական աղբյուրներ, Գ, թարգմ. բնագրից, առաջաբան ծանոթագր. Ա. Խ. Սաֆրաստյանի, Եր., 1967, էջ 200:

³⁴ http://www.turkotek.com/salon_00087/salon.html

մուգ կապույտ, լաջվարդ, մանիշակագույն, զեյթունի գույն, սրճագույն, սև, դեղին, գովարչի գույները»:³⁵

Հարավարևելյան Վասպուրականի, ինչպես նաև դրանց մերձակա Սովուխ-Բուլաղի քրդական գորգագործական կենտրոններին վերաբերող գորգերի գեղազարդման համակարգերը, դատելով հրապարակված նմուշներից, աչքի են ընկնում նաև բուսածաղկային ու ավելի մանր երկրաչափական զարդերով և գունային համեմատաբար ներդաշնակ գունաերանգներով, ինչպես նաև կատարման որակի բարձր հատկանիշներով: Այստեղ չափազանց դժվարին է դառնում հայոց ու քրդերի գործած գորգերի տարբերակումը, մասնավաճնդ եթե նկատի ունենանք այդ տարածաշրջանի Պարսկաստանի առավել հոծ հայ բնակչություն ունեցած լինելու հանգամանքը:³⁶ Ընդ որում՝ Ուրմիա լճի հարավային ու հարավարևմտյան մասերում գտնվող այդ տարածաշրջանի հայերը հայտնի էին գորգագործական հարուստ ավանդույթներով՝ մասնավորապես դա վերաբերում է Ռահվար Գյուղին, որտեղի գերեզմանոցի տապանաքարերից մեկին պատկերված են նաև գորգագործի գործիքներ (նկ. 1):³⁷ Այս պարագայում էլ որպես այս կամ այն էթնիկական տարրին բնորոշ հատկանիշ, պետք է կարևորել գորգերի գեղազարդման համակարգում տեղ գտած զարդերի ու հորինվածքների մատուցման առանձնահատկությունները: Նշենք, որ սա վերաբերում է նաև Դերսիմի գորգագործական կենտրոններին, որտեղ, ինչպես նշել են ականատեսները, XX դ. սկզբներին քրդական ցեղերի մի մասը գործում էր առաջնակարգ գորգեր ու կարպետներ:

Այսպիսով՝ Վասպուրականի հարավարևելյան ու արևելյան գորգագործական կենտրոնների հայոց գորգագործական մշակույթի ուսումնասիրման, գորգագործական կենտրոններին բնորոշ գորգերի տիպերի ձևավորման գործընթացների հարցում առանցքային նշանակություն ունեն այդ տարածաշրջանների ժողովրդագրական նկարագրի ու դրա մի շարք դրսևորումների առանձնահատկությունների բացահայտումը: Դրանց ու գորգագործական այդ կենտրոնների էթնիկական տարրերին բնորոշ գորգերի գեղազարդման ու տեխնոլոգիական ավանդույթների համադրմամբ էլ հնարավոր է այս կամ այն չափով տարբերակել հայոց ու քրդական գորգերի տիպերն ու դրանց տարածման արեալները:

³⁵ Նույն տեղում, էջ 46:

³⁶ **Փալուստ Շերմազանյան**, Նիւբեր ազգային պատմութեան համար, երևելի հայկազունք ի Պարսկաստան, աշխատասիրութեամբ Փալուստ Շերմազանեանի, Ռոստով, 1890, էջ 110:

³⁷ **Gregorian T. Arthur, Gregorian Joyce Hampshire**, *Armenian Rugs from Gregorian Collection*, Copyright, 1987, էջ 9:

³⁸ Տես, Ա. **Պողոսյան**, Դերսիմի հայոց գորգագործական մշակույթի մասին (պատմաազգագրական ակնարկ).- «Էջմիածին», 2012, Ա, էջ 59, 63, 64:

*Բանալի բառեր – Վան, գորգ, մշակույթ, ժողովրդագրական, գավառ,
մշակախոշ, կարպետ*

**HISTORICAL DEMOGRAPHY OF SOUTH-EASTERN COUNTIES OF VASPURAKAN
AND ITS EXPRESSIONS IN THE PORTRAIT OF RUG WEAVING CULTURE OF THE
AREA**

(2-nd half of XIX - beginning of XX centuries)

A. A. POGHOSYAN

*Candidate of Historical Sciences,
GSU lecturer*

The revelation of demographic portrait of the south-eastern rug weaving centers of Vas-purakan and their manifestation peculiarities is of primary importance for the study of Armenian rug weaving culture of the area. Apart from this, comparison of traditions charas-teristic to the ethnic communities known by their rug weaving art in the given area makes it possible to dif-ferentiate the rug types and their expansion areas pertaining to these communities.

**ОСОБЕННОСТИ ИСТОРИЧЕСКОЙ ДЕМОГРАФИИ ЮГО-ВОСТОЧНЫХ
ПРОВИНЦИЙ ВАСПУРАКАНА И ИХ ОТРАЖЕНИЕ В СФЕРЕ
КОВРОТКАЧЕСТВА ЭТОГО РЕГИОНА**

/вт. половина XIX в. — нач. XX в./

A. A. ПОГОСЯН

*Кандидат исторических наук,
преподаватель Гаварского государственного университета*

При исследовании ковроткачества армян юго-восточных провинций Васпуракана решающее значение имеет выявление формирования специ-фических особенностей состояния демографии данного региона. Сопос-тавление этих факторов с художественно-технологическими традициями этнических групп, обладающих ковроткачками навыками, дает нам возможность определить характерные им типы ковров и ареальность их распространения.